

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒԹ Ի Ի Ն

33) Karl Kannenberg „Kleinasien Naturschätze“ 278 S. mit. 31. Vollbildern und 2 Plänen. Կարլ Կաննենբերգ, Փոքր-Ասիայի բնական հարստությունները՝ 278 էրես, 31 պատկերով և 2 յտա-կագծով:

Ինչպէս յայտնի է, վերջին տարիների ընթացքում Գեր-մանիան զգալի կերպով մտերմացել է Թիւրքիայի հետ և նրա հովանաւորի դերն է կատարում: Վիլհելմ II և Արդուլ Համիդը ոչ մի առիթ բաց չեն թողնում, որպէս զի միմեանց փոխա-դարձ սէր ու յարգանք չարտայայտեն:

Այդպիսի մտերմութիւնը գերմանական կապիտալի համար բաց է արել մի զիւրընթաց ուղի դէպի արեւելք, դէպի Փոքր-Ասիա: Շահատէր գերմանացիները շատ լաւ հասկանում են այդ իրողութիւնը և ամենայն ջանք ու եռանդով աշխատում են օգ-տուել բարեբաւոտիկ հանգամանքներից: Նրանք Փոքր-Ասիայում հիմնում են նորանոր գաղութներ, սկսում են նորանոր ձեռ-նարկութիւններ, որոնց շարքում Բաղդադի երկաթուղին «գլուխ գործոց» կարող է համարուել:

Սակայն նախ քան ձեռնարկութիւնների դիմելը անհրա-ժեշտ է տեղական պայմաններին ծանօթանալ, հարկաւոր է եր-կիրը ուսումնասիրել: Եւ գերմանացիները մեծ ընդունակու-թեամբ կատարում են այդ միսսիան: Իբրեւ ապացոյց բաւական է յիշել այն փաստը, որ միայն վերջին տարիներում այդ ուղղու-թեամբ գրուած գրքերի ու լրագրական յօդուածների թիւը տասնեակներ է հասնում:

Ահա մի այդպիսի ուսումնասիրութիւն է ներկայացնում և Կաննենբերգի աշխատութիւնը, որ իր հարուստ տեղեկու-թիւններով օգտակար կարող է լինել ոչ միայն գերմանացինե-րին, այլ և բոլոր այն մարդկանց, որոնց մեծ կամ փոքր չափով հետաքրքրում է Փոքր-Ասիայի տնտեսական կեանքը:

Հեղինակն անմիջապէս ծանօթ է եղել երկրին և բացի

դրանից իր ձեռքի տակ ունեցել է հարուստ նիւթեր զանազան լեզուներով, ուստի և նրա աշխատութիւնը չունի այնպիսի վայրիվերոյ դատողութիւններ, այնպիսի խոշոր սխալներ, որոնցով սովորաբար լի են լինում Թիւրքիայի մասին գրուած գրքերից շատերը:

Նա բաւական մանրամասն նկարագրում է Փոքր-Ասիայի ընտանի ու վայրենի կենդանիները, բոյսերը, հանքերը: Տեղտեղ առաջ է բերում վիճակագրական տեղեկութիւններ և միշտ յիշում է խօսուած նիւթի մասին գոյութիւն ունեցող գրականութիւնը:

Հեղինակի հաղորդած փաստերից երևում է, որ անասնապահութիւնը բաւական տարածուած է Փոքր-Ասիայում: Ներանով պարապում են գլխաւորապէս մահմեդականները, քիւրդերը, Թիւրքերը և այլն: Ամենատարածուած կենդանին է ոչխարը: Ոչխարների մեծ քանակութեամբ առանձնապէս յայտնի է Անգորայի վիլայէթը, որտեղ 1894 թ. 1,603,242 գլուխ ոչխար է եղել: Չափազանց հռչակուած է նոյն վիլայէթի այժը իր դեֆտիկով: 1894 թ. այդտեղ եղել է 1,230,052 այծ:

Եւկրագործութիւն. դեռ հին դարերում Փոքր-Ասիան յայտնի էր իր պողատու հողով և առատ ու քաղցրահամ հացահատիկներով: Այժմ էլ բնական պայմանները մնացել են նոյնը, սակայն մարդկային յարաբերութիւնները փոխուել են, ուստի արդիւնագործութեան այդ ճիւղը շատ յետամնաց դրութեան մէջ է ընկել: Մշակում են միայն ամբողջ երկրի 40—45⁰/₀, բայց դրա ³/₄ էլ կազմում է վաւուֆ, այսինքն մզկիթների սեփականութիւն, այնպէս որ ամբողջ երկրի միայն 10⁰/₀ է ժողովրդական սեպհականութիւն կազմում:

Գաւով հարկերին, պէտք է նկատել, որ դրանք այնքան բազմաթիւ են, այնքան ծանր, որ շատ անգամ գիւղացին ստիպուած է լինում իր ամբողջ եկամուտի 40⁰/₀ վճարել: Դրանից յետոյ հասկանալի է, թէ ինչու շատ հողեր անմշակ են մնում, թէ ինչու երկրագործ ժողովուրդը գերադասում է պանդրխտել, քան թէ գծոխային պայմաններում երկիրը մշակել:

Երկրի պողաբերութեան մասին աւելի շօշափելի գաղափար տալու համար հեղինակը յիշում է, որ վատ բերքի ժամանակ հացահատիկները տալիս են մէկին—3—4, միջակ բերքի ժամանակ—մէկին՝ 15—20, իսկ ամենալաւի ժամանակ—մէկին 40—50.

Հանքերի կողմից էլ աղքատ չէ Փոքր-Ասիան, միայն ի հարկ է ամեն ինչ թաքնուած է ու անօգտակար, որովհետև հետազօտող—մշակող չը կայ: Պատմաբանների հաղորդած տեղե-

կուլթիւններից երևում է, որ Տմօլուս (այժմ Բողդադ) սարից հոսող Պատկոլուս (այժմ Ղարասու) գետը հարուստ է եղել ոսկեխառն աւազով: Այդ գետն է եղել Կրեսոս թագաւորին առատ ոսկի մատակարարողը: Իսկ այժմ... Թիւրք կառավարութեան անհոգութեան պատճառով նրա մասին մտածող էլ չը կայ:

Արծաթի հանքերով յայտնի են Գիւմուշխանէ, Կարահիսար (Սիվազի վիլայէթում), Դենիք մադան (Ղզլիրմաղի մօտ), Բերան մադած (Եփրատի ափին), Բուլղար Դաղ (Կոնիայի մօտ), Բալիա և այլն:

Կան և երկաթի, պղնձի, արճճի, աղի, քարածուխի հանքեր, բայց մեծ մասամբ անհոգութեան մատնուած:

Փոքր-Ասիայի բազմաթիւ բոյսերից առանձին ուշադրութեան արժանի է ծխախոտը, որի մենաշնորհը գտանոււմ է Regie ընկերութեան ձեռքում: Այդ ընկերութիւնը վճարում է տարեկան 750,000 ոսկի «Dette publique», 80% վերցնում է իր կապիտալի համար, իսկ մնացած ամբողջ օգուտը բաժանում է իր և կառավարութեան մէջ:

Պայմանագրի համաձայն ոչ ոք իրաւունք չունի իր ցանած ծխախոտը գործածելու կամ բացի Regie-ից ուրիշին ծախելու: Regie-ին էլ վճարում է սովորաբար 7—10 պիաստեր մէկ հոխայի համար.—Այդպիսի վիճակը մի կողմից թանգացրել է ծխախոտի արժէքը, իսկ միւս կողմից կաշկանդել նրա ազատ մշակութիւնը...

Պ. Կաննենքերգ տեղ-տեղ խօսում է և Փոքր-Ասիայում ապրող ազգութիւնների մասին: Նա ի միջի այլոց պնդում է, թէ քիւրճեր երբէք լաւ երկրագործներ չեն եղել, որովհետև երկրագործութիւնը պահանջում է ծանր ու երկար աշխատանք: Անհրաժեշտ է չը մոռանալ որ՝ ա) Փոքր-Ասիայի այս կամ այն կողմում պատահող լաւ երկրագործները զուտ թիւրքեր չեն, այլ լազեր, չերքէզներ և այլն և բ) եթէ թիւրքերը երբեմն լաւ պարտէզներ ու այգիներ են պահում, այդ դեռ չի նշանակում, թէ նրանք լաւ երկրագործներ են բառիս բուն նշանակութեամբ:

Արժէ կարդալ այդ գիրքը...